



## Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

(Բաճառի բաժան գիտությունների  
բեկնածու)

### ՊՐՈՖ. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

(Մեղայան 75-ամյակի առթիվ)

Դասական բանասիրության ներկայացուցիչներից քերին վիճակվեց հայագիտության նոր սերնդի տեական ուղեկիցն ու լծակիցը լինելու Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը ինքնատիպ էր ոչ միայն իր անհատական բնավորությամբ, հետաքրքրությունների բազմակողմանիությամբ ու ընդգրկումներով, այլ նաև գիտական երկու սերունդների կենդանի շաղկապումով, նրա առաջին հոգվածներն ու ուսումնասիրությունները երևացին այն շրջանում, երբ հայագիտության ու վրացագիտության հիմնական կենտրոնները տակավին գրսում էին գտնվում, որքան էլ ազնիվ ու նվիրական գործունեությամբ, այնուամենայնիվ գրսում։ Լեոն Մելիքսեթ-Բեկը իր կարողությունների բոլորակի նվիրաբերումով մասնակցեց հայրենական կրթօջախների ստեղծմանը և ավելի քան հիստուն տարի ստեղծագործեց կովկասագիտության երևելի ու սկսնակ ներկայացուցիչների հետ կողք-կողքի։

Լ. Մելիքսեթ-Բեկը ծնվել է 1890 թվականի սեպտեմբերի 26-ին, Թիֆլիսում։ Օրբելիանու պանսիոնում զրաճանաչություն սովորելուց հետո (1897—1899), ընդունվում է Թիֆլիսի ռեալական դպրոցը (1899—1908), իսկ ապա՝ Օդեսայի համալսարանը, իրավաբանական ֆակուլտետում սովորելուն զուգընթաց, իբրև ազատ ունկնդիր, հաճախում է նույն համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը և աշակերտում է Ա. Ալմասովին (կանոնական իրավունք), Ա. Շապկովին (ռուսական իրավունքի պատմություն), Ա. Թոմսոնին (լեզվաբանության նե-

րածություն), Մ. Պոպրովսկոյին (սլավոնների պատմություն), է. Ֆոն-Շտերնին (հնագիտություն) և այլ գիտնականների։ Համալսարանական տարիներին երիտասարդ Լ. Մելիքսեթ-Բեկը մասնավոր հետաքրքրություն է ցուցաբերում հնագիտության վերաբերմամբ։ Ուսումնասիրության նպատակով մի քանի անգամ նա ճամբորդում է Ռուսաստանի հայկական բնակավայրեր կամ գաղութներ ունեցող մասերում՝ Ուկրաինա, Ղրիմ, Խերսոնես և այլն։ 1913 թվականին ավարտում է Օդեսայի (նովորոսիսյկի) համալսարանը և նորից Թիֆլիս վերադառնում։ Ուսանողական տարիներին գրված մեկ տասնյակից ավելի գիտական աշխատություններն ու հազորդումները արդեն գրավել էին հայագետ-կովկասագետների ուշադրությունը։ 21—23 տարեկան Մելիքսեթ-Բեկի աշխատանքների մասին դրախտություններ են հրապարակում Լ. Քալանթարը, Հ. Մովսիսյանը, Գ. Թումանյանը, Ա. Խախանաշվիլին և վերջապես ալագեմիկոս Ն. Մառը։ Ինչ խոսք, քննության առնվող հարցերը (օրինակ՝ «Վրացիների ազգակցությունը իսպանացիների հետ՝ ըստ հին ազբյուրների», «Հայկական հնությունները Աքեմենյանում», «Ռուսիո հարավում բնակվող հայոց պատմության նյութերից», «Հայոց Գերագույն Պատրիարքի իրավաբանական դրությունը», «Օդեսայում հայտնաբերված 15-րդ դարի Շարակնոցը» և այլն, բոլորն էլ գրված ողեսերեն) ոչ հավասար գիտական լուծում են ստացել, այդ պատճառով էլ գրախոսները բավական կարևոր դիտողու-

թյուններ են անում: Բայց գլխավորն այն է, որ Լ. Մելիքսեթ-Քեկը տակավին երիտասարդ հասակում ձեռնամուխ է լինում գիտական լուրջ հարցերի քննության, որոնց մի մասին նա հետագայում նորից անդրադարձավ: Թիֆլիսում, մինչև համալսարանում հայոց լեզվի դասախոս նշանակվելը (1918 թ.) վարում է մի շարք պաշտոններ, այդ թվում՝ Հայոց ազգագրական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ-բարտուղար (նախագահ՝ Ե. Լալայան), Մոսկովյան հնագիտական ընկերության կովկասյան բաժանմունքի իսկական անդամ և ապա՝ գիտական բարտուղար, վրաց լեզվի ու պատմության դասախոս Թիֆլիսի երրորդ արական գիմնազիայում և այլն:

**Թիֆլիսի** համալսարանի բացումը արդարև խոշոր իրադարձություն էր: Նորարաց համալսարանում կային երկու վրացագետ-հայագետներ՝ ինքը Ի. Զավախիշվիլին և նրա ու Մառի աջակիրու Ա. Շանիձեն: Լ. Մելիքսեթ-Քեկի հրավիրումը նախ զարգացնում էր հայագիտական կարգերի պատրաստման հնարավորությունները և ապա նոր ու մեծ հեռանկարներ բացում երիտասարդ Լ. Մելիքսեթ-Քեկի համար:

Հին մատենագրությամբ զրազվող մասնագետները, մի շարք հասկանալի պատճառներով, չեն կարող սահմանափակվել որևէ նեղ մասնաճյուղով: Ամենեկին էլ զարմանալու չէ, որ լեզվարան Հ. Աճառյանը հայ գրականության պատմություն էր գրում, կամ բանագետ Մ. Աբեղյանը զրավոր մատենագրությանն ու լեզվին վերաբերող դասական աշխատություններ ժառանգում նոր սերնդին: Վերջին տասնամյակներում լեզվաբան ճանաչված Ն. Մառը հնագիտության, հայ ու մերձավոր արևելքի ժողովուրդների պատմության, մատենագրության խոշորագույն մասնագետ էր: Ն. Աբեղյանի պես լայն ընդգրկում ունեցող պատմաբանը նույն սիրով ու հաշտությամբ զբաղվել է քերականությամբ: Ահա այս միջավայրի ու հետաքրքրությունների կրողներից մեկն էր և Լ. Մելիքսեթ-Քեկը:

Համառոտակի թվենք գիտության տյն բնագավառները, որոնցով զբաղվել է նա. գրականություն, պատմություն, բանահյուսություն, վիճաբարգիտություն, հնագիտություն, բնագրագիտություն, լեզվաբանություն, հնագրագիտություն, արվեստագիտություն, պատմագիտություն, աղբյուրագիտություն, իրավունքի պատմություն, ազգագրագիտություն, մատենագիտություն, գեղարվեստական թարգմանություն և այլն: Այս ամենը ըստ արժանվույն զնահատելու

համար մասնավոր ուսումնասիրություն է անհրաժեշտ, ինչպիսին, հավատացած ենք, կարվի ժամանակի ընթացքում: Մենք այստեղ կներկայացնենք մի քանի աշխատություններ՝ հիմնական գծերով բնութագրելու համար պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի գիտական վաստակը: Նրա առաջին ծավալուն մենագրությունը վերաբերում է 11—13-րդ դարերի Հյուսիսային Հայաստանի կրթությանը: Պատմաբանները մատենագրության ուսումնասիրությունը՝ «Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց և նրանց ինքնությունը» խորագրով (1928 թ., Թիֆլիս, վրացերեն): Ուսումնասիրությունը զրված է ինչպես հայ մատենագիրներից շատերի գրական ժառանգությունը վեր հանելու, այնպես էլ հայ վրացական պատմական-մշակութային փոխհարաբերությունները 11—13-րդ դարերում լուսարանելու շահագրգռությամբ: Պատմական Գուգարը—Լոռի—Տաշիրը—Վրաց-դաշտ—Սևորդյաց աշխարհ—Սոմխեթ հասկացողությունների պատմա-աշխարհագրական ճշտումներից հետո, զբոլում րացահայտվում են տեղիս կրթությանը ստեղծված մատենագրության բնույթն ու զրդապատճառները: Անմիջական տերիտորիալ պետական աղերս ունենալով Վրաստանի հետ, 11—13-րդ դարերի Հայաստանի հյուսիսային գավառներում նկատելիորեն ուժեղանում է զավանդարանական հակամարտությունը, որը, ինչպես ճիշտ գիտված է, տակավին միայն այս կամ այն ձևակերպումը մեկնելու հարց չէր: Հյուսիսային վարդապետները բանավիճում էին միաժամանակ և՛ կիլիկյան հայ գործիչների հետ (Ն. Շնորհալի, Գ. Տղտ, Ն. Լամբրոնացի), և՛ վրաց հոգևորականների: Այդ պատճառով էլ Մատթեոս Հաղրատեցու, Վարդան, Հակոբ, Անանիա Սանահինցիների, Հովհաննես Սարկավազի, Վարդան Հաղբատեցու, Դավիթ Քոթայրեցու մեզ հասած երկերը լավագույն սկզբնաղբյուր են այս շրջանի ինչպես հայ մշակույթի պատմության, այնպես էլ հայ վրացական պատմական-մշակութային փոխհարաբերությունների ուսումնասիրության համար: Երկարակ վարդապետությունը թափանցում էր վանական որոշ կենտրոններ (Պղնձահանք, Օսկնալար, Հնեվանք, Քորայր և այլն) և լուրջ վտանգ ստեղծում ավանդական միաբնակության համար: Այդ պատճառով է, որ Տուտեոթգին և այլք ահալանգով են խոսում հայ-բյուղանդական եկեղեցական մերձեցումների մասին, երբեմն նույնիսկ չափից ավելի մեղադրելով:

«Վարդապետը հայոց հյուսիսային կողմանց» աշխատության մեջ որոշ հեղինակ-



ներ (Հովհաննես Սարկավազ, Մխիթար Գոշ) ներկայացված են նրանց վերաբերող աղբյուրների լիակատար հավաքումով ու քննարկմամբ, նրանցից յուրաքանչյուրի մատենադրական ժառանգությունը սահմանելու և ճշտելու համար կատարված է խոշոր ու մանրագին բանասիրական աշխատանք: Ավելին, հնարավորության դեպքում արված են այն աղբյուրները, որոնք շատ կամ քիչ սկզնադրյուր են եղել տվյալ երկի համար, իսկ երբեմն էլ զուգակշիռ հրապարակված են ամբողջական տեքստեր: Մխիթար Գոշի «Գծագրություն... յաղազս Վրաց» թուղթը, որինակ, առաջին անգամ է բանասիրական քննության ենթարկվում, թեև տեքստը մինչ այդ արդեն հայտնի էր («Արարատ» 1909 թ.): Այստեղ ապացուցվում է, որ.

ա) Մխիթար Գոշը հայ-վրացական փոխհարաբերություններին վերաբերող երկու ստեղծագործություն է ունեցել, որոնցից առաջինը, որի գոյության մասին գիտն Գանձակեցին, մեզ չի հասել:

բ) Երկրորդ թուղթը հիմնված է եղել առաջինի վրա:

գ) «Գծագրություն...»-ը գրված է Զաքարիա և Իվանե Երկայնաբազուկների պատվերով՝ ի պատասխան վրաց հոգևորականության:

դ) Թղթի նպատակը հայոց դավանանքի պաշտպանությունն է և որ կարևորն է,

ե) «Ճեղինակը խնդրում է Զաքարիա և Իվանե Երկայնաբազուկներին ու վրաց կաթողիկոսին, որպեսզի նրանք իրենց հեղինակավոր ձայնը բարձրացնեն րարեպաշտ թաղավորներ թամարի ու Դավիթ (Սոսլանի) առաջ՝ իրենց թաղավորական իրավունքով վերջ տալու վրաց անվանարկությանը հայոց նկատմամբ և ձեռք քաշել աալու հայոց հալածումից» (էջ 242—243): Այս երկի համար նշվում են երկու հիմնական աղբյուրներ՝ Հովհան Օձնեցի և Անանիա Սանահնեցի: Այսպիսով, Լ. Մելիքսեթ-Քեկի առաջին մենագրությունը տեական ու խղճամիտ աշխատանքի արդյունք է, երկուստեք կարևորություն (հայագիտության և վրացագիտության համար), մանավանդ իր պատմական մասով և կից քարտեզ-տախտակներով:

Հետագայում գիտնականը բազմիցս է անդրադարձել նշված գրքում քննարկված հարցերին և ոչ սակավ լրացումներ արել: Դժբախտաբար գիրքը շունեցավ երկրորդ հրատարակություն, որը, անկասկած, ավելի ամբողջական ու հարուստ կլիներ: Ն. Աղոնցի «Պատմական ուսումնասիրություններ»-ի հրատարակիչ Ա. Խոնդկարյանը գրում է, թե «... հանգուցյալի գիտական գրքին բոլոր

աշխատությունները կարճ մենագրությունների բնույթ են կրում. մի հանգամանք, որ Ն. Աղոնց ինքը րացաարում էր Ն. Մառի ազդեցությամբ» (Փարիզ, 1948, էջ 11): Այս բնորոշումը ամբողջությամբ վերաբերում է և Լևոն Մելիքսեթ-Քեկին, որը թեև բառացիորեն Մառի աշակերտը չէր, բայց հետևում էր նրան և իրեն աշակերտ համարում: Ի դեպ, ակադեմիկոս Ն. Մառը մեծ ուղադրությամբ էր հետևում Մելիքսեթ-Քեկի ուսումնասիրություններին ու հրապարակումներին: Բաբվում կարգացած իր գասախոսություններից մեկում, երբ ինքը տարված էր հայերենական տեսությամբ, Մառը ցավում էր, որ թիֆլիսեցի իր աշակերտ Լ. Մելիքսեթ-Քեկը այդ ուղղությամբ արված աշխատանքները համարում է քննության կարոտ կամ թեական: Մելիքսեթ-Քեկը հետևում է դասական բանասիրությամբ զբաղվող Մառին և, ինչպես ասվեց, նրա օրինակով ավելի ենախնդրում էր հոգվածային ուսումնասիրությունը, ուսուցչի պես ինքն էլ ժամանակ չունենալով նրանք ի վերջո ի մի բերել: 1960 թվականին լույս տեսած լիակատար մատենագիտությամբ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը շուրջ 600 անուն աշխատությունների հեղինակ է, որոնց մեծ մասը, հասկանալի է, առանձին հոդվածներ ու հրապարակումներ են:

Երկրորդ ծավալուն աշխատությունը վերաբերում է վրացական աղբյուրների ուսումնասիրությանն ու թարգմանությանը: 1934 թվականին երևանում լույս տեսավ «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» բառահատոր աշխատության Ա գիրքը (Բ-ը՝ 1936 թ., Գ-ը՝ 1955 թ.): Համառոտ առաջաբանում տրվում են նյութի բնութագրումը, նրա պատմական-աղբյուրագիտական արժեքավորումը: Լ. Մելիքսեթ-Քեկը միանգամայն ճիշտ է նկատում, որ 5—11-րդ դարերի վրացական աղբյուրների վկայությունները Հայաստանի ու հայոց մասին զավանարանական հարցերի են առնչվում, սահմանափակ նյութ պարունակելով ժողովրդի պատմության համար: Բայց նկատելու է, որ վարքարանական, վկայաբանական երկերում տեղ գտած որոշ տեղեկություններ չափազանց կարևոր են Հայաստանի անցյալին վերաբերող որոշ հարցերի քննության ժամանակ: Հայերեն լեզվով հիմնականում

<sup>1</sup> Նախատեսված չորրորդ գիրքը, որտեղ ամփոփվելու էին «Վիմական տարեգրքը, հայերենից թարգմանված երկասիրությունների վարիանտները, մուղվրդական բանահյուսությունը, հավելվածներն ու կարևոր ցանկերը», դեռևս հրապարակված չէ: Մեզ հայտնի չէ հանգուցյալ պրոֆեսորը այն ավարտել է:

պահպանվել է հակաքաղկեդոնական գրականություն, որտեղ նույնքան միակողմանիություն կա, որքան միաբնակության դեմ ուղղված քաղկեդոնական երկերում։ Ուստի այս ոչ երկրորդական խնդրի ուսումնասիրության համար քյուլանդական ավանդներին հետևող վրացական հոգևոր երկասիրությունները կարևոր աղբյուր են՝ համեմատության միջոցով ճշմարիտ պատկերը ներկայացնելու համար։ Լ. Մելիքսեթ-Քեկը չի սահմանափակվել միայն տեքստերի թարգմանությամբ, ներկայացվող աղբյուրին վերաբերող համառոտ տեղեկանք ու մատենագիտություն տալուց բացի, նա կցել է հարուստ և ինքնուրույն ուսումնասիրության արժեք ներկայացնող ծանոթագրություններ, մեծ մասամբ տեքստարանական-աղբյուրագիտական բնույթի։ Ծիշտ է, այդ աղբյուրները իրենց ընդգրկումով ու նյութով չեն չափվում հայ մատենագիրների մոտ գտնվող վրաստանին վերաբերող տեղեկությունների հետ, այնուամենայնիվ, ինչպես վերևում նշվեց, հույժ անհրաժեշտ են ու կարևոր։ Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը թեև ներկայացնում է վրացերենում արդեն հրապարակված նյութեր, բայց ոչ սակավ դեպքերում քաղվածաբար թարգմանությունը կատարում է իր իսկ համեմատած կամ տպագրության պատրաստած բնագրերից։ Այսպես, օրինակ, Արսեն Սափարացու «Վրաց ու հայոց բաժանման մասին» երկասիրությունը մինչև այժմ էլ հայտնի է մի հրատարակությամբ («Քրոնիկներ», հատ. 1), մասամբ պակասավոր։ Լ. Մելիքսեթ-Քեկը նախ երեք ձեռագրերի համեմատությամբ վերականգնած բնագիր է կազմել, ապա թարգմանել է հայերեն։ Ի դեպ, այս երկը ամենից ավելի ամբողջական է ներկայացված, ունենալով փոքր կրճատումներ։ «Վրաց աղբյուրներ...»-ի երեք հատորները մինչև այժմ հայագետներին մատչելի միակ հրատարակությունն են։ Բայց անհրաժեշտ է նշել, որ հատվածաբար թարգմանություններից օգտվելը կապված է որոշ զգալիությունների հետ։ Ընդհանուր տեքստից կտրված հատվածը օգտագործողին կարող է ոչ լրիվ համոզել եզրակացության հանգեցնել։ Այժմ առկա է վրաց տարեգրքի («Քարթլիս ցխովրբա»-ի) դիտական հրատարակություն (հրատ. Ս. Ղաուխիշվիլի), որից պետք է թարգմանվեն ամբողջական ստեղծագործություններ, կցելով հին հայերեն խմբագրությունը։ Սույն անհրաժեշտությունը պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը ոչ միայն չէր ժխտում, այլև ցավում էր, որ հայ-վրացական բանասիրությամբ զբաղվող մասնագետներ (խոս-

քր, իհարկե, հայագրի վրացագետներին է վերաբերում) քիչ ունենք։ Հատկապես շատ անելիք կա միջնադարյան վրացական հրովարտականների ու եկեղեցական-աշխարհիկ այլ փաստաթղթերի վկայությունները հայոց մասին ուսումնասիրելու և լուսարանելու գործում։ Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը նախատեսում էր վերաթարգմանել հայկական բնագրի հիմքի վրա գույացած վրացական որոշ խմբագրություններ (օրինակ՝ նշանավոր «Պատմություններ»-ը), բայց շատ այլ նախատեսումների հետ այս աշխատանքը ևս անվարտ մնաց։

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը իր տեական գիտական աշխատանքի ընթացքում պակաս հետաքրքրություն չի ցուցաբերել հայկական ու վրացական բնագրերն ուսումնասիրելու և հրատարակելու նկատմամբ։ Դեռևս 1920 թվականին նա հրատարակում է «Վարք Ս. Գրիգոր Պարթևի» վրացական խմբագրությունը, որը, ուսումնասիրողի համոզմամբ, թարգմանված է 1081 թվականին, հունական մետափրասյան խմբագրությունից։ Թեև որոշ ժամանակ անց ակադեմիկոս Ի. Զավախիշվիլին ու պրոֆ. Ի. Աբուլաձեն առարկեցին բնագրի հարցում, բայց ամենակարևորը տեքստի հրատարակությունը պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի աներկբա վաստակն է։ Ի դեպ, լեզվական-տեքստաբանական հարցերում նրան օժանդակել է խոշորագույն վրացագետ-արևելագետ ակադեմիկոս Կ. Կեկելիձեն, որին հրատարակիչը շնորհակալությամբ է հիշում։ Տարիներ անց (1952 թ.) նա հրատարակեց Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» երկի 86-րդ գլխի վրացական թարգմանությունը, կատարված 18-րդ դարում։ Հատկապես նշանավոր է Վախտանգ Զ-ի «Օրենսգրքի» հայկական մասի (Մխիթար Գոշի «Դատաստանագրքի») հրատարակությունը, վրացական բնագրին նախորդող առաջաբանով (1927 թ.)։ Վրաց «Օրենսգրքի» հայերենից թարգմանված մասը հայտնի էր դեռևս Բրոսսենին ու Վահան վարդապետ Բաևտամյանցին։ Վերջինս կազմել էր նույնիսկ հոդվածներ համապատասխանության աղյուսակ-տախտակ։ Այնուամենայնիվ, Լ. Մելիքսեթ-Քեկի հրատարակությունը բազմաթիվ նոր հարցեր է առաջադրում. մասնավորապես այստեղ կան հոգվածներ, որոնք յուրովի են խմբագրվել թարգմանիչների (կամ համապատասխան այլ իրավասու անձանց) կողմից և վրաց իրականության կնիք են մատնանշում։ Հրատարակիչը առաջարկում խոստանում է հետագայում առանձին ուսումնասիրություն նվիրել հայոց Դատաս-



տանազրթի 18-րդ դարի առաջին տասնամյակի վրացերեն թարգմանությանը: Եթե այդպիսին սահմանվել է հանգուցյալ պրոֆեսորի անտիպ աշխատությունների մեջ, ապա նրա հրատարակության կարևորությունը կասկածից դուրս է:

Տասնամյակներ շարունակ Թիֆլիսի համալսարանում հայ գրականության (մատենագրության) պատմություն դասախոսելով, Լ. Մելիքսեթ-Քեկը անհրաժեշտ է համարում վրացերեն լեզվով հայ գրականության պատմություն հրատարակել: Այն լույս է ածվում 1941 թվականին (240 էջ): Ի դեպ, վրաց ընթերցողը մինչ այդ ծանոթ էր ակադեմիկոս Իվանե Զավախիշվիլու «Հայոց հին պատմական մատենագրություն» աշխատությանը (1935 թ.), որտեղ ներկայացված է հայ մարտիրոսագրությունն ու վարքագրությունը 5-րդ դարում, վերջինիս մեջ ներառելով Ագաթանգեղոսի և Կորյունի աշխատությունները<sup>2</sup>, Լ. Մելիքսեթ-Քեկը կազմում է ավելի ընդհանուր բնութագիր ունեցող ձեռնարկ, ինչպես մեկ ուրիշ առիթով ասել ենք, որոշակի կիրառելով ակադեմիկոս Կ. Կեկելիձեի նշանավոր երկհատորյակի պարբերացման փորձն ու եղանակը: Լ. Մելիքսեթ-Քեկը հայ գրականության հասկացությունը արդարացիորեն չի սահմանափակել զեղարվեստական պայմանականությամբ: Այստեղ համառոտակի ներկայացված են բոլոր նշանավոր մատենագիրները:

Լ. Մելիքսեթ-Քեկը մեծ վաստակ ունի նաև հայ և վրացի մատենագիրների գրական ժառանգության ուսումնասիրման և հրատարակման գործում: Հովհաննես Վանականի, Մխիթար Գոշի և շատ այլոց անտիպ աշխատությունների ուսումնասիրությունը, բանասիրության մեջ առաջին խոսքն ասելու պարագան նշանակալի և պարտավորեցնող ժառանգություն են: Նա չէր խուսափում և կնճռոտ կամ կնճուռած հարցերի քննություններից, ինչպես, օրինակ, «Քորեպիսկոպոս» թե՛ «Քորիկոս» (Գուրգեն թե՛ Կյուրիկե), որ սկզբունքային կարևորություն ունի Կախեթ-Հերեթ-Սոմխեթի պատմության համար (1951 թ.) կամ հայոց-վրաց-աղվանների այբուբենի սանդղծման խնդրի քննությունը (1957 թ.), այդպիսին է Դիոնիսիոս Արիսպագուցու և Պետրոս Վրացու նույնանունության հարցադրումը:

<sup>2</sup> Աշխատության առաջաբանում կարդում ենք. «Յուրաքանչյուր կրթված վրացու համար անհրաժեշտ է իմանալ իր հաճախ եղբայրական ժողովրդի՝ հայոց բազմաառն, սակայն անշափ ցեղաբնական ճակատագիրը» (էջ VI):

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի գիտական ժառանգության բաղկացուցիչ մասն են կազմում հնագիտական, ազգագրական և վիճագրագիտական ուսումնասիրությունները: 1938 թվականին նա հրատարակեց «Մեղալիթյան մշակույթը Վրաստանում» չափազանց արժեքավոր ուսումնասիրությունը, հետագայում լրացնելով նոր նյութերով «Մեղալիթյան մշակույթը Վրաստանում և նրա վերապրուկները Խուսավելու դարաշրջանում» (1943 թ.): Նա քիչ վաստակ չուներ նաև միջնադարյան վրացական ու հայկական (նաև աղվանական) հուշարձաններն ուսումնասիրելու գործում, այդ թվում՝ Մցխեթայի տաճարը (նախապես Արմաղիի մասին), Քոնդքի հուշարձանները, Թիֆլիսի վանքն ու Ս. Գևորգ եկեղեցին, Սևանի վանքը, էջմիածնի, Գարեջայի և րաղմաթի վայրվանքեր ու մենաստաններ: Լ. Մելիքսեթ-Քեկի ուսումնասիրությունների բնորոշ կողմնային է, որ նա վարպետորեն է համագործակցում հնագիտական տվյալները պատմական սկզբնաղբյուրների ու արձանագրությունների ընձեռած վկայությունների հետ և եզրակացությունը կառուցում բացառապես փաստական նյութի վրա: Հարազատ մնալով դասական բանասիրության ավանդություններին, նա ամենայն բարեխղճությամբ ու մանրակրկիտությամբ ներկայացնում է իր ուսումնասիրած հարցի պատմությունը՝ միշտ և անխտիր արժանին հատուցելով իրենից առաջ զբաղված մասնագետներին: Եթե Լ. Մելիքսեթ-Քեկի որևէ աշխատության մեջ պատահեն վկայակոչության պակասի դեպքեր, ապա դա բացառապես հեղինակին անծանոթ լինելու կամ վրիպման արդյունք է: Լ. Մելիքսեթ-Քեկի գիտական բարեխղճությունը ամեն մի կասկածից դուրս է: Հետևելով Ն. Մառի, Հ. Օրբելու, Գ. Կլոթգիկոս Հովսեփյանի, Կ. Կոստանյանցի և ուրիշ անվանի բանասերների ավանդություններին, Լ. Մելիքսեթ-Քեկը հայկական ու վրացական վիճագիր արձանագրությունները վերծանող և ուսումնասիրող լավագույն գիտնականներից էր: Նա հեղինակել է տասնյակից ավելի աշխատություններ, որտեղ վիճագրական նորոշումներ են առաջարկվում, իսկ երբեմն էլ ինքնատիպ լուսաբանությամբ ներկայացվում արգեն գիտությունը հայտնիները: Հատկապես նշանավոր է Գարեջայի մոնղոլական շրջանի (1352 թ.) բառայնության արձանագրության (վրացերեն—հայերեն—պարսկերեն—ուղղորդներ) հայտնաբերումն ու վերծանումը (1940—1953 թ. թ.): Վերջինիս համադրումը 14-րդ դարի վրաց Անանունի «Ժամանակագրության» ընձեռած

տվյալների հետ, թեև ոչ տառացիորեն ժամանակակից, բանասերների ու պատմաբանների առաջ մի շարք խնդիրներ է դնում: Զորս լեզուներով գրելու պարագան ինքնին բազմանշանակ երևույթ է, մանավանդ եթե նկատի առնենք տվյալ մենաստանի ուրիշ արձանագրություններ ևս, այդ թվում և հայերեն: Լ. Մելիքսեթ-Քեկը պրպտելու զարմանալի կարողություն ուներ: Հաճելի անակնկալ էր 874 թվականի Սևանի հայերեն արձանագրության հայտնարերումը, որտեղ միջնադարյան աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է Երևան բնակավայրը: Հանգուցյալը մասնավոր ուշագրությամբ ժողովում ու հրատարակում էր Վրաստանի սահմաններում պահպանված հայերեն արձանագրությունները (Ատեն, Դմանխսի, Գարեջա, Մավկիս-Թեկթե և այլն): Նա մտադիր էր վրաստանում պահպանված հայերեն արձանագրությունների դիվան կազմել: Որքանով մեզ հայտնի է, այդ աշխատանքը ավարտված է, բայց թե արդյո՞ք պատրաստ է տպագրության՝ դժվարանում ենք ասել:

Ոչ ծավալուն մեկ հաղորդմամբ անհնար է բնութագրել գիտական այն մեծ ժառանգությունը, որ պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Քեկը թողել է կովկասագիտությանը: Ընդհանուր նկարագիրը տալու համար նշենք, որ երախտավոր գիտնականը ոչ պակաս վաստակ ունի նաև հայ և վրաց գեղարվեստական գրականության բնագավառում: Նա հատկապես զբաղվել է Սայաթ-Նովայով: 1930 թվականին լույս աեսավ Լ. Մելիքսեթ-Քեկի «Սայաթ-Նովայի ինքնությունը» վրացերեն գրքույկը, որը, ինչպս մեկ ուրիշ աղիթով նշել ենք, կարևոր ավանդ է սայաթնովայագիտության մեջ: Փաստորեն առաջին անգամ նա ապացուցեց, որ Հ. Աճառյանի նկարագրած թավրիղի ձևագրի հիշատակագրողը ինքը Սայաթ-Նովան է: Հինգ տարի անց նա վրացերեն է թարգմանում երգչի հայերեն խաղերը և հրապարակում մի արժեքավոր առաջաբանով: Նա կազմել է ու հրատարակել Շամշի-Մելքոյի երգերի ժողովածուն, առաջինը հրապարակ բերել Գեվորգ Գորեցու երկնգվյան բանաստեղծությունները և այլն: Լ. Մելիքսեթ-Քեկը հաճախ զբաղվել է և թարգմանությամբ՝ հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն, ռուսերենից հայերեն:

Ի վերջո, երկու խոսք էլ Լ. Մելիքսեթ-Քեկի մատենագիտական աշխատությունների

մասին: 1949 թվականին Թիֆլիսում լույս տեսավ նրա «Վրաստանի պատմության զրավոր աղբյուրների հրատարակություններ» քարտարանի առաջին զիրքը: Այստեղ ներկայացված են 5—19-րդ դարի 60-ադան թվականների վրացական աղբյուրները, իսկ երկրորդ բաժնում՝ հայկական աղբյուրները Վրաստանի մասին, «Քաբտարան»-ը սսլառիչ աղբյուրներ է հաղորդում ավյալ սկզբնաղբյուրի մասին, մասնավորապես՝ հեղինակ, խորագիր, գրչության ժամանակ, բովանդակություն, ծավալ, հրատարակություններ, թարգմանություններ, գիտական գրականություն: Նույն սկզբունքով էլ ներկայացված են հայկական աղբյուրները՝ Ագաթանգեղոսից մինչև վարդան Օձնեցի: Մրագրված հաջորդ երկու գրքերում, ինչպես հեղինակի առաջաբանից ենք տեղեկանում, ներկայացվելու էին վրաստանի մասին նյութեր պարունակող այլ աղբյուրները՝ գաղական հունարեն և լատիներեն, բյուզանդական, ասորական, արաբական, պարսկական, թուրքական, սլավոնական-ռուսական և արևմտաեվրոպական լեզուներով: Որքանով անձնական զորույցներից մեզ հայտնի է՝ աշխատության երկրորդ զիրքը ևս պատրաստ է ապագություն:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի յուրաքանչյուր աշխատություն ինքնին նաև մասնագիտություն է: Առանձին նա կազմել է մատենագիտություն՝ «Վագրենավորը հայ գրականության մեջ», Գրիշաշվիլու հայերեն թարգմանությունները, Իսահակյանը վրաց գրականության մեջ և շատ ուրիշ թեմաներով:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը իր ժողովրդի ներկայից կտրված գիտնական չէր: Նա արձագանքել է գրեթե բոլոր նշանավոր իրադարձություններին, սրտի կսկիծով բողոքել հայ և վրաց ժողովուրդների միջև խառնակություն ստեղծող խմբավորումների դեմ, հեռեկա ու պահպանել հայկական հնությունները Վրաստանում, վրացականը՝ Հայաստանում, միշտ հավատալով իր ժողովրդի ապագային, սիրելով նրան և թանկ գնահատելով նրա բախտակցին՝ վրաց ժողովրդին:

Լ. Մելիքսեթ-Քեկը ուղղամիտ, ուղղախոս, անկաշառ ու անմիջական անձնավորություն և գիտնական էր: Հավասարացած ենք, որ նոր սերունդը սիրով կհատկացնի Լ. Մելիքսեթ-Քեկին այն տեղը, որի իրավունքը նա վաստակել է երկարամյա աշխատանքով:

